

1. 2015 թվականի դեկտեմբերի 24-ին «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակի և «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի միջև կնքված N4/15-CIF դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում վճարովի ծառայությունների

### **մատուցման աշխատանքների նկարագիր**

**Ծրագրի անվանումը.** «Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ» դրամաշնորհային ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր)

**Ծրագրի հիմնական նպատակը** «Բիզնեսի կառավարում» («Գործարար վարչարարություն (կառավարում)»)<sup>1</sup> մագիստրոսական կրթական ծրագրի կազմակերպումն է հեռավար ձևաչափով, որի արդյունքում կտրվեն ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի համատեղ դիպլոմներ:

### **ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ (ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ԳԾՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿ**

Հեռավար (դիստանցիոն) ուսուցմամբ կրթական ծրագրերի իրականացման ժամանակ տեղեկատվական բազայի (ռեսուրսների) օգտագործման կարգի մշակման գծով խորհրդատուից ակնկալվում է Ծրագրի ղեկավարի ուղղակի վերահսկողության ներքո կատարել հետևյալը.

1. Նկարագրել հեռավար ուսուցման համար անհրաժեշտ տեխնիկական ռեսուրսները և օգտագործման պայմանները:

2. ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի N 124-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 14-րդ կետի համաձայն՝ սահմանել հեռավար (դիստանցիոն) ուսուցմամբ կրթական ծրագրերի իրականացման ժամանակ տեղեկատվական բազայի (ռեսուրսների) օգտագործման կարգն ու ձևը:

3. Շահառուների հետ իրականացնել հանդիպումներ և քննարկումներ մշակված հեռավար (դիստանցիոն) ուսուցմամբ կրթական ծրագրերի իրականացման ժամանակ տեղեկատվական բազայի (ռեսուրսների) օգտագործման կարգի վերաբերյալ:

4. Մասնակցել Ծրագրով նախատեսված քննարկումներին և աջակցել Ծրագրի իրականացման հետ կապված խնդիրների լուծմանը:

---

<sup>1</sup> 041301.04.7 Գործարար վարչարարություն (կառավարում)՝ համաձայն 2015 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների կրթական ծրագրերը հաստատելու մասին» N 647-Ա/Ք հրամանի:

5. Կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնել փուլային հաշվետվություն (մեկ փուլի տևողությունը մեկ ամիս է):

## **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

### **1.ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ**

- բարձրագույն կրթություն (ցանկալի է նաև գիտական աստիճան)
- վերջին տասը տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ կրթական համակարգում
- հայերենի, ռուսերենի և անգլերենի իմացություն
- համակարգչային հմտություններ (MS Office, համացանց և այլն)

---

**30 միավոր**

### **2.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ**

- դիտարկման, ուսումնասիրության, վերլուծության և գնահատման փորձառություն
- թիմային աշխատանքի, արդյունավետ հաղորդակցման և համագործակցելու կարողություն/փորձառություն

---

**30 միավոր**

### **3.ՀԱՏՈՒԿ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ**

- կրթության ոլորտում գործունեության փորձառություն (դասավանդում, վերլուծական աշխատանքներ, կրթական քաղաքականության ու հիմնական իրավական ակտերի իմացություն, վերապատրաստումներ, նորամուծություններ, մասնակցություն ծրագրերին և այլն)
- հեռավար կրթության տեղեկատվական ռեսուրսների իմացություն
- **ռազմավարությունների և/կամ հայեցակարգերի մշակման փորձ**
- առաջարկությունների կազմման և ներկայացման փորձ

---

**40 միավոր**

## **ՆԱԽԱՀԱՇԻՎ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ**

հոկտեմբեր 2016-նոյեմբեր 2016